ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

ՄԱՐՏԻ 4-ԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ սկսվեցին Ս. Սեղանի վերակառուցման աշխատանքները։ Այս առթիվ Վեհափառ Հայրապետը իր համաձայնությունը տվեց, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կողմից կատարվեն պեղման աշխատանքներ։ Պեղումները կղեկավարի ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանը։

Ս. Սեղանի վերակառուցման աշխատանքների ընթացքում սուրբ պատարագը կմատուցվի Իշման Ս. Սեղանի վրա։

***

ՄԱՐՏԻ 8-ԻՆ, ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարի Ավագ Սեղանի վերաշինության պատճառով, սուրբ պատարագը մատուցվեց Իշման Ս. Սեղանի վրա։ Պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը՝ «այրի կնոջ երկու լումաներ»-ի բարոյական մեծ արժեքի մասին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 9-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանում դասախոսեց Ճեմարանի եվրոպական երաժշտության ուսուցիչ Մովսես Շարբաթյանը՝ «Կոմիտաս վարդապետը և նրա երաժշտությունը» շահեկան թեմայի շուրջ, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

***

ՄԱՐՏԻ 9-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հավաքույթ, նվիրված հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանի քարոզի քննարկմանը։

***

ՄԱՐՏԻ 12-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանում դասախոսեց ճարտարապետ Լիպարիտ Սադոյանը «Հայերեն տպագրական տառերի բարեփոխությունը» շատ այժմեական թեմայի շուրջ, որը լսվեց խորոնկ հետաքրքրությամբ։

Դասախոսության ներկա էր Վեհափառ Հայրապետը։ Վերջում վերատեսուչ սրբազանը ջերմ շնորհակալություն հայտնեց շահեկան դասախոսության համար։

***

ՄԱՐՏԻ 13-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեցին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, Վրաստանի հայոց առաջնորդի պաշտոնակատար հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, Բաքվի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել հոգեշնորհ վարդապետներին։

Ամսի 16-ին առաջնորդական փոխանորդ վարդապետները վերադարձան իրենց թեմերը։

***

ՄԱՐՏԻ 14-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարչարանացն»։ Փակ է Հոգևոր Ճեմարանը։ Օրվա մեծ տոնի առթիվ Իշման Ս. Սեղանի առաջ հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։

***

ՄԱՐՏԻ 15-ԻՆ, ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻՆ, Իշման Ս. Սեղանի առաջ պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը և քարոզեց Բաքվի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէս» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 16-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԱՆ, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հավաքույթ, նվիրված հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետի քարոզի քննարկմանը։

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մեծ պահոց օրերին Մայր Աթոռի բոլոր սարկավագները քարոզեցին մայրաքաղաքի եկեղեցիներում և Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը շինիչ ու թելադրական խրատներ տվեց սարկավագներին և խոսեց «Ինչպե՞ս պետք է քարոզել» թեմայի շուրջը։

***

ՄԱՐՏԻ 19-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը հանդիսավորապես երգեց վերջին Արևագալի ժամերգության երգերը, ապրումով ու հուզումով։

Արևագալի ժամերգության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 22-ԻՆ, ԾԱՂԿԱՁԱՐԴԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Աթոռում ավանդական շուքով կատարվեցին Ծաղկազարդի և «Դոնբացէք»-ի եկեղեցական արարողությունները։ Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզեց պատարագիչ սրբազանը՝ նկարագրելով Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, վեր հանելով նրա բարոյական նշանակությունը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան տեղի ունեցավ հանդիսավոր «Դոնբացէք»-ի արարողությունը։

***

ՄԱՐՏԻ 22-ԻՆ, ԾԱՂԿԱՁԱՐԴԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում, սուրբ պատարագի ընթացքում, սարկավագ ձեռնադրեց ուրարակիրներ Հովհաննես Եղիայանին (ծնված 1926 թ.) և Վարուժան Առաքելյանին (ծնված 1936 թ.)։ Հովհաննես սարկավագն ընդունվեց Մայր Աթոռի միաբանության շարքերում, իսկ Վարուժան սարկավագը, Բաքվի հայոց եկեղեցում սպասավորելուց հետո, Տիրոջ օգնականությամբ քահանա կձեռնադրվի։

Երկու սարկավագներն էլ երիտասարդ նոր ուժեր են, Հայ Եկեղեցուն ծառայելու ջերմ ուխտով տոգորված։

***

ՄԱՐՏԻ 25-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, արձակուրդ տրվեց Հոգևոր Ճեմարանի ուսանողության՝ զատկական տոների առթիվ։ Երեկոյան ժամերգությունից հետո ուսանողությունը խոստովանվեց Մայր Տաճարում։ Վերատեսուչ սրբազանը, «արձակում» տալուց առաջ, ուսանողությանը խոսեց բովանդակալից և դաստիարակչական մի խրատական, խոստովանանքի հոգևոր արժեքի և բարոյական նշանակության մասին։

***

ՄԱՐՏԻ 26-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում պաշտվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր Հոգևոր Ճեմարանի փոխ տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

Սուրբ պատարագի ավարտին Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը ստացավ Ս. Հաղորդություն։

Երեկոյան ժամը 5-ին, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, կատարվեց Ոտնալվայի հանդիսավոր կարգը։

«Ի գիշերին հսկումն է»։ Ժամը 7-ին զողանջում են Մայր Տաճարի զանգերը։ Հսկումի ժամն է։ Վեհափառ Հայրապետը իջնում է Մայր Տաճար և կարդում առաջին Գիրքը։ Տիրոջ մատնության գիշերն է։ «Փառք ի բարձունս»-ից հետո քարոզում է գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ «Յուդա, համբուրելո՞վ մատնես զվարդապետն» բնաբանով։

***

ՄԱՐՏԻ 27-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Յիշատակ շարշարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Առավոտյան ժամը 9-ին կատարվում է Խաչելության կարգը։

Երեկոյան ժամը 5-ին Թաղման կարգն է։ Նախագահում է Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 28-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Ճրագալոյց Զատկի»։ Հարության Ճրագալույցի երեկոն է։ Հոգևոր Ճեմարանի ուսանողներից չորս հոգի

հաջող կերպով ընթերցում են Դանիելի գիրքը, որից հետո սկսվում է սուրբ պատարագը։ Պատարագիչն է գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։

Ճրագալույցի սուրբ պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, «Այսօր յարեաւ» շարականի երգակցությամբ, առաջնորդվում է Վեհարան։

***

ՄԱՐՏԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Զատիկ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Գարուն է ամեն կողմ և տոնական տրամադրություն Մայր Աթոռում։

Վեհափառ Հայրապետը, առավոտյան ժամը 11.30-ին, առաջնորդվում է Մայր Տաճար, մատուցելու Ս. Հարության տոնի հանդիսավոր սուրբ պատարագը։

Հայրապետական պատարագի ժամանակ Ս. Սեղանին սպասարկում են Մայր Աթոռի եպիսկոպոսներն ու վարդապետները։ Մայր Տաճարի երգչախումբը, պր. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, երգում է սուրբ պատարագը։ Սուրբ պատարագին ներկա են Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վերստուգիչ հանձնախմբի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հարգարժան անձնավորություններ։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհարանում, Վեհափառ Հայրապետը ընդունում է զատկական շնորհավորություններ, ապա օրհնում է և բարեմաղթություններ կատարում Մայր Աթոռի և Հայաստանյայց Եկեղեցու պայծառության, Հայրենի երկրի և ժողովրդի խաղաղ առաջընթացի և աշխարհի խաղաղության համար։

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է զատկական Իր սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին, Ճեմարանի դասախոսներին, Մայր Աթոռի պաշտոնեության և այլ պաշտոնական անձնավորության։

***

ՄԱՐՏԻ 30-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։ Պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց «Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»։